ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ

Անցկացման տարեթիվ և ժամ՝
26.06.2024 թ. ժ. 16:00

Անցկացման վայր՝ Էկոնոմիկայի նախարարության
կոլեգիայի դահլիճ

Խորհրդի նիստը նախագահում էր՝ Էկոնոմիկայի նախարար, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ենթախորհրդի նախագահ Գևորգ Պապոյանը

Մասնակցում էին՝

1.	Սևակ Միքայելյան	էկոնոմիկայի նախարարի տեղակալ՝ ՓՄՁ զարգացմանն ուղղված աշխատանքները համակարգող
2.	Արամ Խաչատրյան	«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ
3.	Լուսինե Մնացականյան	«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն
4.	Ինգա Հարությունյան	«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն
5.	Հայկազ Ֆանյան	«Սոցիալ-Տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամ
6.	Կարեն Զաքարյան	«Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
7.	Նիկա Մանուկովա	«Համաշխարհային ազատ տնտեսական գոտիների կազմակերպություն» ոչ առևտրային ասոցիացիա
8.	Հրաչյա Զաքոյան	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
9.	Ալլա Հախնազարյան	«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպություն

10.	Գուրգեն Գրիգորյան	«Կառուցապատողների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն

Հրավիրված անձինք

11.	Արտակ Մանուկյան	Կենտրոնական բանկի խորհրդի անդամ
12.	Մարգարիտա Զալիբեկյան	Արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչության պետ
13.	Դավիթ Ղարիբյան	Արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի տնօրենի տեղակալ
14.	Հրաչ Սարգսյան	Արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի ներկայացուցիչ
15.	Հասմիկ Զաքարյան	Ֆինանսական ենթակառուցվածքների զարգացման վարչություն
16.	Լյուբով Գևորգյան	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և աշխատանքի վարձատրության քաղաքականության բաժնի պետ
17.	Սարգիս Հովհաննիսյան	«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի գլխավոր իրավաբան

Քարտուղարության անդամներ

18.	Լիլիթ Հակոբյան	Էկոնոմիկայի նախարարության Ձեռներեցության վարչության պետ
19.	Հովսեփ Պատվականյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ղեկավար
20.	Հայկ Մալխասյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու

21.	Դավիթ Աղաջանյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ
22.	Վիկտորիա Կամարյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի գրասենյակի համակարգող
23.	Հասմիկ Տոնապետյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի գրասենյակի հանրային կապերի պատասխանատու
24.	Հռիփսիմե Հովհաննիսյան	Էկոնոմիկայի նախարարության Ձեռներեցության վարչության ՊՄԵ բաժնի պետ

Օրակարգի հաստատում

ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային Խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) ղեկավար Հովսեփ Պատվականյանը ներկայացրեց ենթախորհրդի նիստի օրակարգի հետևյալ նախագիծը.

Հարց 1. Նախորդ նիստի ընթացքում ընդունված որոշումների կատարման մասին զեկուցում՝

1) Առևտրային ցանցերի և մատակարար կազմակերպությունների միջև վճարային պարտավորությունների չկատարումը կանխարգելող կարգավորումներ,

2) Մշակող արդյունաբերության ոլորտի ընկերությունների կողմից նոր աշխատողների՝ այդ թվում աշխատանքային փորձ չունեցող կամ վերաորակավորման կարիք ունեցող անձանց ներգրավումը և աշխատանքային պայմաններում ուսուցումը խրախուսող միջոցառում,

3) ՍԵՅՖ (Simple Agreement for Future Equity - SAFE) պայմանագրերի համար իրավակարգավորող դաշտի ստեղծում (««Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ),

4) Բազմամյա տնկարկների հիմնման նպատակով համայնքային հողերի վարձակալության ժամկետի վերանայում («ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ)

5) Հարկային օրենսգրքում փոփոխությունների փաթեթ՝ բիզնեսի կողմից ԲՈՒՀ-երին, միջին մասնագիտական և հանրակրթական հաստատություններին նվիրաբերությունների ծավալը մեծացնելու նպատակով («ՀՀ հարկային օրենսգրքում» փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ),

6) Օպցիոնի պայմանագրի հասկացության և դրա կիրառման հիմնական պայմանների սահմանում, օպցիոնի պայմանագրերի համար իրավակարգավորող դաշտի ստեղծում («ՀՀ քաղաքացիական օրենսգրքում», «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ)

7) Գործատուի կողմից օրենքով սահմանված կարգով աշխատավարձ չհաշվարկելու կամ չվճարելու դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված պատասխանատվության վերանայման հնարավորություն («Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ)

8) ՀԴՄ կտրոնների վրա ԱՏԳԱԱ կամ ԱԴԳՏ կոդերի սխալ տպագրման դեպքում (իրականությանը համապատասխանող ապրանքի անվանման տպագրման պայմաններում) ՀԴՄ-ի կիրառման կանոնների խախտման համար նախատեսված տուգանքի նվազ չափի սահմանում: («Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ)

9) Գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի կնքման համար իրավակարգավորումների ներդրում («ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ),

10) Փորձաքննության արդյունքների համաձայն երկակի նշանակության ապրանքներ չհանդիսացող ապրանքների արտահանման և ռազմական նշանակության ապրանք չհանդիսացող ապրանքների ներմուծման ժամանակ կրկնակի փորձաքննության անհրաժեշտությունը բացառելուն ուղղված կարգավորումների ներդրում («Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին և «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծեր).

11) Կրթական ծրագրերի իրականացման համար սահմանված որոշ տեխնիկական պահանջների վերանայում

12) Անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման կարգավորումների բարեփոխման նախաձեռնություն («ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ)

13) ՍՊԸ բաժնեմասի կամ Բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի փոխարկելի փոխառության պայմանագրի վերաբերյալ իրավական կարգավորումների ներդրում («ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», ««Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին», ««Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթ):

14) Հողամասերի նպատակային նշանակության փոփոխման հետևանքով առաջացող կադաստրային արժեքների տարբերությունը վճարելու պարտավորությունը տարաժամկետելու հնարավորության ներդրում («ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ)

Հարց 2. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենսդրության մի շարք խնդիրների վերաբերյալ (««Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին», ««Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթ)՝

Նիստը նախագահող պարոն Գևորգ Պապոյանի առաջարկությամբ միաձայն հաստատվեց ՓՄՁ Ենթախորհրդի նիստի օրակարգը:

Օրակարգային հարց 1՝ ՓՄՁ Ենթախորհրդի նախորդ նիստերի ընթացքում քննարկված հարցերի ընթացքի վերաբերյալ հաղորդում.

1. Զեկուցող Հովսեփ Պատվականյանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ս.թ. հունիսի 19-ին ՓՄՁ զարգացման խորհրդի ժամանակ նախորդ նիստերի ընթացքում ընդունված որոշումների կատարման մասին զեկուցումից շատ ժամանակ չի անցել՝ նիստը նախագահող պարոն Պապոյանի և ենթախորհրդի անդամների համաձայնությամբ, առաջարկեց անցնել օրակարգային հարց 2-ի քննարկմանը և քանի որ խնդրի կարգավորման անհրաժեշտության ազդակը եկել է մասնավոր հատվածից, առաջարկեց խորհրդի անդամ Լուսինե Մնացականյանին ընդհանրական ներկայացնել բարեփոխման բնույթը:

Օրակարգային հարց 2՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենսդրության մի շարք խնդիրների վերաբերյալ (««Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին», ««Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթ).

1. **Զեկուցող՝ Խորհրդի անդամ Լուսինե Մնացականյանը** հանդես եկավ հարցի վերաբերյալ զեկույցով, որում ներկայացրեց, որ Հայաստանում ՍՊԸ կազմակերպաիրավական ձևը բավականին շատ է կիրառվում և հարցի հետ կապված հավաքագրվել են և ՍՊԸ-երի համար հատկանշական և ընդհանրական բնույթի մի շարք խնդիրներ, որոնք յուրաքանչյուր տեսակի և չափի բիզնեսների համար են արդիական, կան նաև ոլորտային խնդիրներ, սակայն նախագծով հիմնականում անդրադարձ է կատարվել կոնկրետ ՍՊԸ-երի համար բնորոշ՝ մասնավորապես բաժնետիրոջ իրավունքի հետ կապված, ներդրումների ձևակերպումների և այլնի մասով հավաքագրված խնդիրներին: Տիկին Մնացականյանը, ի հավելում տեղեկացրեց, որ նախագծային առաջարկների առավել մանրամասներ կներկայացնի Հայկ Մալխասյանը:

2. **Հաջորդիվ զեկուցող՝ Հայկ Մալխասյանը** տեղեկացրեց, որ հարցը կներկայացնի երկու մասով՝ առաջինը վերաբերում է այն գործընթացին, որի արդյունքում մշակվել է նախագիծը, իսկ երկրորդ մասում անդրադարձ կկատարի 11 համախմբերով սկզբունքային մոտեցումների մասով, քանի որ բովանդակային բավականին ծավալուն է, որից հետո դրանք կքննարկվեն յուրաքանչյուր համախումբը առանձին:

Գործընթացի մասին Հայկ Մալխասյանը տեղեկացրեց, որ խնդիրները հավաքագրվել են Խորհրդի ամենօրյա աշխատանքի և թե բիզնեսի, և թե իրավաբանական առաջատար կազմակերպությունների, և թե բիզնես հաշվապահական-աուդիտորական համայնքի ներկայացուցիչների հատուկ իրականացված հանդիպումների և քննարկումների միջոցով: Նշված գործընթացի արդյունքում իրականացվեց 30-ից ավել խնդիրների քարտեզագրում և զտման միջոցով ձևավորվեց ներկայացված նախագիծը, որի ծածկույթը ներառում է 11 խումբ հարցեր: Պարոն Մալխասյանը նշեց, որ նախագծով չի առաջադրվում կոնցեպտուալ կամ գաղափարական փոփոխություններ և վերջինիս նպատակն է գործնական այն խնդիրների կարգավորումը, որոնք առաջանում են ՀՀ-ում գրանցված 90 հազարից ավելի ՍՊԸ-երի ամենօրյա գործունեության ընթացքում՝ ոլորտի կարգավորման օրենսդրության մեջ առկա անորոշությունների, այլ իրավական ակտերի հետ հակասությունների և այլն պատճառներով: Այսպիսով՝ նախագծով առաջարկվող փոփոխություններն են՝

2.1. Ընկերության հիմնադրման մասին պայմանագրի կնքման պահանջը դարձնել դիսպոզիտիվ:

Օրենքով սահմանված է, որ հիմնադիրները միմյանց հետ կնքում են հիմնադրման մասին պայմանագիր, որով պետք է կարգավորվեն նախքան հիմնադրումը նրանց միջև իրավահարաբերությունները, սակայն գործնականում նման պայմանագրերի կնքումը տեղի է ունենում հազվադեպ և հիմնադիրները հիմնականում իրենց համաձայնությունները ձևակերպում են հիմնադիր ժողովի արձանագրությամբ: 30 տարվա կիրառման փորձը ցույց է տալիս, որ վերոհիշյալ կարգավորման պարտադիր պահանջի կարիքը չկա: Ըստ այդմ՝ էլ առաջարկվում է հիմնադրման մասին պայմանագրի կնքման պահանջը դարձնել ոչ պարտադիր, այլ կամավոր՝ բացառությամբ անշարժ գույքի ներդրման մասին պայմանագրերի: Արդարադատության նախարարության գործընկերների հետ քննարկումների արդյունքներով նշվածի հետ կապված դրույթ է սահմանվելու նախագծում:

1) **Խորհրդի անդամ Հայկազ Ֆանյանի կողմից ներկայացվեց հետևյալ հարցադրումը՝** եթե գործնականում նման պայմանագրերի կնքումը տեղի է ունենում հազվադեպ և հիմնադիրները հիմնականում իրենց համաձայնությունները ձևակերպում են հիմնադիր ժողովի արձանագրությամբ, ապա գուցե առկա չէ դրույթի պահպանման առաջարկությունը:

2) **ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Սևակ Միքայելյանը առաջարկեց՝** դիտարկել անշարժ գույքի ներդրման պայմանագրի կնքման պահանջի ամրագրումը միայն, եթե գործնական փորձը ցույց է տալիս, որ պայմանագրերի կնքման կարիքը չկա և, ըստ

էության, դա տեղի է ունենում հազվադեպ և հիմնադիրները հիմնականում իրենց համաձայնությունները ձևակերպում են հիմնադիր ժողովի արձանագրությամբ:

Հայկ Մալխասյանը պարզաբանումներ ներկայացրեց հարցադրման մասով դրույթի կիրառման փորձից, մասնավորապես տեղեկացրեց, որ, երբեմն, նման պայմանագրերի կնքելու պահանջ կարող է առաջանալ, օրինակ՝ երբ նախահիմնադրման փուլում նախատեսվում են ինչ-որ գործողություններ և ծավալուն ծախսեր ու կողմերը՝ բաշխման տեսանկյունից, գտնում են, որ կարևոր է նախապես որոշել, թե ծախսերը ինչ համամասնությամբ կամ ինչ ծավալներով է իրականացվելու, գուցե կողմերը որոշեն ամրագրել պայմանագրով: Պարտք-ներդրումային հարաբերությունների դեպքում, որպես կանոն, պայմանագրերի կնքման պահանջ առաջանում է: Այդ իսկ պատճառով չի առաջարկվում դրույթը ամբողջովին հանել, այլ առաջարկվում է զուտ գործնական փորձի ամրագրում՝ սահմանելով, որ դա իրավունք է, բայց ոչ պարտականություն:

2.2. Վերացնել ընկերության կանոնադրության մեջ հիմնադիրների մասին տեղեկություններ ներառելու մասին պահանջը՝ նման տեղեկատվությունները ներկայացնելով Ընկերության հիմնադրման մասին հիմնադրի հիմնադիրների որոշման կամ ընկերության հիմնադիր ժողովի արձանագրության մեջ և հետագայում փոփոխել մասնակիցների ռեեստրում փոփոխություններ կատարելու եղանակով:

Օրենքի այսօրվա կարգավորումների համաձայն՝ ընկերության կանոնադրությունը պետք է պարունակի տեղեկություններ ընկերության մասնակիցների մասին: Դա հանգեցնում է նրան, որ ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասի օտարման դեպքում անհրաժեշտ է լինում ոչ միայն կատարել ընկերության բաժնեմասի կամ դրա մասի օտարման պետական գրանցում՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքին համապատասխան, անհրաժեշտ է գումարել ընկերության ընդհանուր ժողով, փոփոխություն կատարել ընկերության կանոնադրությունում՝ բացառապես մասնակիցների մասով և դրանք նույնպես ներկայացնել պետական գրանցման՝ որպես ընկերության փոփոխություն: Արդյունքում առաջանում է անհարկի վարչարարական բեռ: Առաջարկվում է վերացնել ավելորդ վարչարարության հիմք հանդիսացող ընկերության կանոնադրության մեջ ընկերության մասնակիցների մասին տեղեկություններ ներառելու մասին պահանջը, դա ներառվի առանձին որպես ռեգիստրի տվյալներ և օտարման դեպքում փոփոխություն կատարվի ռեգիստրում, առանց կանոնադրության փոփոխության:

Հարցի վերաբերյալ հիմնական դիտարկումներ ներկայացրեցին՝

1) **Խորհրդի անդամ Կարեն Զաքարյանը՝** ներկայումս ընկերությունների օրենք է մշակվում, առանձին գլուխներով առանձին կազմակերպաիրավական առանձնահատկությունների սահմանմամբ և ենթադրվում է, որ դրանով ամբողջական վերանայում կիրականացվի կարգավորումների, քանի որ ներկայիս դրությամբ տարբեր օրենքներ տարբեր կարգավորումներ և առանձնահատկություններ են սահմանում, ընդ

որում դրանց մի մասը ոչ ակտուալ են և չկիրառվող: Այս փուլում գոնե ՍՊԸ-երի գրանցման դրույթը կարելի է մոտարկել ԲԲԸ-ի մասին ՀՀ օրենքի համապատասխան կարգավորումների հետ, քանի որ պետ ռեգիստրի հանգամանքում բարդ գործարքների դեպքում, կարող է գրանցվի սեփականության իրավունք, օրինակ՝ մարզային մասնաճյուղի աշխատակցի կողմից, որը հնարավոր է խնդիրներ առաջ բերի և ըստ այդմ էլ խնդրի լուծումը առաջարկվում է Կենտրոնական դեպոզիտարիայի տիրույթում դիտարկել: Ընդ որում՝ մասշտաբի էֆեկտի հաշվին կարող է լինել նաև ծախսերի նվազեցում: Խնդիրը միայն գրանցումը չի, կան բարդ իրավահարաբերություններ, որոնց դեպքում համապատասխան կոմպետենցիաներ են պահանջվում:

2) **Լուսինե Մնացականյանը՝** առաջարկվող կարգավորումը լուծում է նաև թաքնված այնպիսի կարևոր խնդիր, որն է անձնական տվյալների պաշտպանության խնդիրը: ՍՊԸ-ը գործնականում շատ հաճախ հիմնադրվում են ֆիզիկական անձանց կողմից և ներկայիս մոդելով վերջինիս անձնագրային տվյալները ամբողջությամբ հասանելի է դառնում և պետռեգիստրից դրանք կարելի է ստանալ՝ մուծելով պահանջվող վճարները: Միաժամանակ տիկին Մնացականյանը հայտնեց, որ չթերագնահատելով պետռեգիստրի դերն ու նշանակությունը, համամիտ է որոշակի գործառույթներ առավել մասնագիտացված կառույցների պատվիրակելու հարցում:

3) **Նիստի հրավիրյալ Արտակ Մանուկյանը՝** նախագծի վերաբերյալ առավել մանրամասն դիտարկումներ կներկայացվեն ԿԲ-ի կողմից՝ պաշտոնական շրջանառման փուլում, սակայն հարկ է նշել, որ քննարկվող շատ հարցերի կարգավորումները պետք է նախատեսել պետական ծառայությունների թվայնացման օրակարգի համատեքստում: Բայց ինչ վերաբում է ընկերությունների մասին օրենսդրական նախաձեռնությանը, ապա այստեղ առկա է 2 բաղադրիչ, օրենքի մշակմանը զուգահեռ աշխատանքներ է տարվելու պետական ռեգիստրի կարողությունների զարգացմանը, որպեսզի ոչ թե ռեգիստրի դերը թերագնահատվի, այլ ընդհակառակը այն պետք է հզորացվի, որ նոր իրավական դաշտում այն հանդես գա ավելի պրոֆեսիոնալ կառույց:

4) **Դիտարկումներին արձագանքեց Խորհրդի ղեկավարի Հովսեփ Պատվականյանը՝** պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ նախագծով առաջարկվող կարգավորումները առավել վարչարարական և տեխնիկական բնույթի են և փոփոխությունների իրականացումը մոտ ապագայում հնարավոր է, իսկ թվայնացման գործընթացն առավել գլոբալ և երկարաժամկետ է: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է ոչ թե բիզնեսին սպասեցնել մի քանի տարի, այլ գնալ ընթացիկ բարեփոխումների ճանապարհով, որը համընթաց է գլոբալ բարեփոխումների նպատակներին:

2.3. Սահմանել, որը Ընկերության մասնակիցները կարող են իրենց միջև կնքել համաձայնագիր՝ մասնակիցների իրավունքների իրականացման և (կամ) բաժնեմասի նկատմամբ իրավունքների իրականացման առանձնահատկությունների մասին:

Ընկերության մասնակիցները հաճախ ցանկանում են իրենց իրավունքների իրականացման և (կամ) բաժնեմասի նկատմամբ իրավունքների իրականացման առանձնահատկությունների մասին պայմանագրեր կնքել: Թեև ՀՀ քաղաքացիական

օրենսգրքի 437-րդ հոդվածի համաձայն անձինք ազատ են կնքել օրենքով չարգելված ցանկացած պայմանագրեր, այնուամենայնիվ հարաբերությունների որոշակիությունն ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել հստակ կարգավորել Ընկերության մասնակիցների միջև համաձայնագրի կնքման հետ կապված իրավահարաբերությունները՝ սահմանելով նման համաձայնագրի առարկային, ձևին ներկայացվող պահանջները և դրա իրավական հետևանքները: Առաջարկվում է սահմանել, որ ընկերության մասնակիցները կարող են իրենց միջև կնքել համաձայնագիր՝ ամրագրելով համաձայնագրի առարկան, դրա կնքման կարգը և իրավական հետևանքները:

Նիստի մասնակիցները ներկայացրեցին հետևյալ հարցադրումները՝

Մարգարիտա Զալիկյան՝ նախագիծը բավականին լավն է, նույնիսկ վճռաբեկ դատարանի մասով առկա են դրույթներ: Նշվում է, որ այլ անձի հետ կարող է կնքվել համաձայնագիր, բայց ուժի մեջ է մտնում, այդ անձը մասնակից դառնալու դեպքում: Որն է նպատակը համաձայնագրի կնքման, եթե միևնույն է մինչ անձի մասնակից դառնալը ուժի մեջ չի մտնելու: Բացի այդ, գրանցման կարճ գործընթացների դեպքում հասկանալի է, սակայն երկարաժամկետի դեպքում անհասկանալի է կարգավորման տրամաբանությունը:

Պարզաբանումներ ներկայացրեց կողմից Հայկ Մալխասյանը՝ գործնականում ներդրողների դեպքում, երբ ներդրողի կողմից պահանջվում է իր մասնակցության ապահովման համար փաթեթային լուծում և ներդրողի հետ, վերջինիս բաժնետիրական համաձայնագրի իրավունքները ապահովելու նպատակով, ստորագրվում է համաձայնագիր, մինչև ռեգիստր գնալը և այլն: Իհարկե, իրավունքները կծագեն ուժի մեջ մտնելու պահից, սակայն ներդրողի համար ստորագրված Համաձայնագիրը առավել երաշխիքային բնույթ է կրում:

2.4. Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները հստակեցնել՝ սահմանելով, որ «երրորդ անձանց» եզրույթը չի ներառում ընկերության այլ մասնակիցներին, իսկ համամասնության կանոնը կիրառելի է միայն մի քանի մասնակցի կողմից գնելու նախապատվության իրենց իրավունքն իրականացնելու դեպքում:

Կարգավորումը վերաբերում է մի շարք տարընկալումների հետ կապված հարցին՝ նախապատվության իրավունքի իրականացման մասով: Մասնավորապես, համաձայն հոդվածի՝ եթե օտարվում է բաժնեմասը երրորդ անձի, ապա մասնակիցները ունեն նախապատվության իրավունք: Կարգավորումը վերաբերում է մի շարք տարընկալումների հետ կապված հարցին՝ նախապատվության իրավունքի իրականացման մասով:

Մասնավորապես, համաձայն հոդվածի՝ եթե օտարվում է բաժնեմասը երրորդ անձի, ապա մասնակիցները ունեն նախապատվության իրավունք: Տարընկալում կա, արդյոք երրորդ անձը համարվում է այլ մասնակից թե ոչ: Այն դեպքում, երբ ընկերությունն ունի երկուսից ավելի մասնակիցներ նրանցից երկուսը կարող են իրար միջև կնքել բաժնեմասի օտարման գործարք, որի դեպքում առաջանում է այլ մասնակիցների մոտ գնման նախապատվության իրավունքի առկայության կամ բացակայության խնդիրը՝ այլ կերպ ասած, արդյո՞ք ձեռք բերող մասնակիցը հանդիսանում է Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով «երրորդ անձ»: Կոնսեսուս կա, որ երրորդ անձը մասնակից չի:

Տարընկալումներ են առաջանում նաև նախապատվության իրավունքը համամասնորեն իրացնելու կարգավորման վերաբերյալ: Մասնավորապես, այն դեպքում, երբ Ընկերությունն ունի չորս մասնակից՝ յուրաքանչյուրը 25 % բաժնեմասով և նրանցից մեկը՝ ընկերության մասնակից չհանդիսացող անձի ցանկանում է օտարել իր բաժնեմասն ամբողջությամբ: Այս դեպքում, եթե նախապատվության իրավունքն իրականացնում է մասնակիցներից մեկը, ապա «համամասնորեն» եզրույթը կարող է մեկնաբանվել որպես օտարվող 25 տոկոսի՝ նախապատվության իրավունքն իրականացնող անձի բաժնեմասին համամասն մասի ձեռք բերման իրավունք: Մինչդեռ նորմի տրամաբանությունն այն է, որ համամասնության կանոնը պետք է կիրառվի միայն այն դեպքում, երբ նախապատվության իրավունքն իրականացնում են երկու և ավելի մասնակիցներ և նրանցից յուրաքանչյուրը կարող է ձեռք բերել օտարվող բաժնեմասի մասը՝ իր բաժնեմասին համամասնորեն:

2.5. Ընկերության միակ մասնակցի կողմից բաժնեմաս օտարելու դեպքում բացառել ընկերության նախապատվության իրավունք չիրականացնելու մասին որոշում կայացնելու պահանջը:

Օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներն անհարկի անհրաժեշտություն են առաջացնում կայացնել ընկերության նախապատվության իրավունք չիրականացնելու մասին միակ մասնակցի որոշում այն դեպքերում, երբ բաժնեմասն օտարվում է ընկերության միակ մասնակցի կողմից:

2.6. Գրավի առարկա բաժնեմասի նկատմամբ բռնագանձում տարածելու դեպքում բացառել նախապատվության իրավունքի կիրառումը այն դեպքում, երբ բաժնեմասի վրա բռնագանձումը տարածվում է գրավի պայմանագրի հիման վրա, որի կնքման վերաբերյալ գրավի պայմանագրի կնքման պահի դրությամբ ընկերության մասնակից հանդիսացող բոլոր անձինք տվել են իրենց գրավոր համաձայնությունը, ինչի մասին եռօրյա ժամկետում բաժնեմասը գրավ դնող մասնակիցը գրավոր ծանուցում է Ընկերությանը:

6. Ընկերության բաժնեմասի գրավադրման վերաբերյալ կանոնները համահունչ չեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի առկա կարգավորումներին: Մասնավորապես Օրենքի կարգավորումներն անհարկի խոչընդոտում են բաժնեմասի գրավադրումը, դրա նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հնարավորությունը:

Այսպես՝ Օրենքի 20-րդ հոդվածի համաձայն ընկերության մասնակցի պարտքերի համար պարտատերերի պահանջով նրա բաժնեմասի վրա կարող է բռնագանձում տարածվել միայն այդ մասնակցի պարտքերը մարելու համար այլ գույքի անբավարարության դեպքում՝ դատարանի վճռի հիման վրա: Օրենքի 17-րդ հոդվածի համաձայն Ընկերության մասնակցի գրավ դրված բաժնեմասի (դրա մասի) վրա բռնագանձում տարածվում է Օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով:

Համապատասխանաբար առաջանում է իրավիճակ, երբ գրավադրված բաժնեմասի նկատմամբ բռնագանձում կարող է տարածվել միայն մասնակցի այլ գույքի անբավարարության դեպքում, ինչը սկզբունքորեն հակասում է գրավի իրավունքի տրամաբանությանը՝ այն է՝ պարտավորությունը չկատարվելու դեպքում գույքի տիրոջ

(գրավատուի) մյուս պարտատերերի հանդեպ գրավ դրված գույքի արժեքից բավարարում ստանալու նախապատվության իրավունքը:
Բացի այդ, առկա կարգավորումները նաև չեն սահմանում գրավի առարկա բաժնեմասի նկատմամբ բռնագանձում տարածելու դեպքում նախապես նախապատվության իրավունքից հրաժարվելու մեխանիզմ: Այսինքն՝ այն դեպքում, երբ բոլոր մասնակիցները համաձայն են, որպեսզի մասնակիցներից մեկը գրավադրի իր բաժնեմասը, նրանք, այնուամենայնիվ, պահպանում են հետագայում իրենց նախապատվության իրացման իրավունքը, ինչը խոչընդոտում է բաժնեմասը գրավի առարկա դարձնելուն և ֆինանսական միջոցների հասանելիություն ստանալուն:

Կա նաև երրորդ բաղադրիչ այս ենթախմբի մեջ: Դա արտադատական կարգով բռնագանձում տարածելու վերաբերյալ է: Առաջարկվում է մեխանիզմ սահմանել, որպեսզի ռեգիստրի գործակալությունը հնարավորություն ունենա արտադատական կարգով բռնագանձման տարածման ծանուցման հիման վրա սեփականության իրավունքի փոխանցում կատարել: Առաջարկվող ձևակերպումները նույն են, ինչ-որ սահմանված են անշարժ գույքի համար՝ հաշվի առնելով սահմանադրական դատարանի մի շարք որոշումներով արտահայտված տեսակետները, որոնք հենց այդպես էլ ինկորպորացվել են: Փորձ է արվել հարցը քննարկել ռեգիստրի հետ, սակայն առայժմ քննարկում չի եղել:

Հարցի վերաբերյալ ներկայացվեցին հետևյալ հարցադրումները՝

1. **Արտակ Մանուկյանը՝**

1) ֆինանսական կազմակերպությունների դեպքում առաջարկվող մեխանիզմով կարող է պարզվել, որ որևէ մի կազմակերպություն նշանակալից մասնակցություն ունի ինչ-որ տեղ: Ֆինանսական կազմակերպությունը կարող է լինել ասենք ՍՊԸ, կամ վարկային, կամ ինչ որ պահի ասենք բանկ, հիմա ինչպես է առանց ՍՊԸ-ի համաձայնության միանգամից դառնալու նշանակալից մասնակից:

2) ՍՊԸ-երի հետ կապված դիտարկվող իրավական բացը առկա է նաև ԲԲԸ-ի մասին օրենքում, գուցե նույնական մոտեցում կիրառել կարգավորման մասով:

2. **Գևորգ Պապոյանը՝** Եթե ԿԲ ներկայացուցչի դիտարկումների համաձայն՝ ԲԲԸ-երի մասով նույնպես կա նմանատիպ խնդիր կա, ապա ինչո՞ւ գոնե այս մասով չբարելավել նաև ԲԲԸ-ի մասին օրենքում համանման դրույթը: Խոսքը չի գնում օրենքի խորքային փոփոխությունների մասին:

2.7. Սահմանել, որ եթե երկրորդ կամ յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո ընկերության զուտ ակտիվների արժեքը կազմում է բացասական մեծություն, ընկերությունն այդ մասին պարտավոր է մեկամսյա ժամկետում հայտարարություն հրապարակել http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, սակայն պարտավոր չէ լուծարման մասին որոշում կայացնել:

Օրենքը սահմանում է, որ եթե երկրորդ կամ յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո ընկերության զուտ ակտիվների արժեքը կազմում է բացասական մեծություն, ընկերությունը պարտադիր պետք է լուծարվի: Ընդ որում, ընկերությունը չի կարող կայացնել որևիցե այլ որոշում, բացի լուծարման որոշումից: Այսինքն, միանգամից փակվում է ցանկացած այլ սկզբունքային որոշում կայացնելու կամ գործունեություն ծավալելու հնարավորություն ու գործնականում վերակազմակերպումների ժամանակ գրանցման փուլում առաջացնում է խնդիրներ: Այս մասով փոխվել է Բաժնետիրական ընկերությունների համար, այն տրամաբանությամբ, որ պետք է հրավիրվի ընդհանուր ժողով, գրավոր ներկայացնես գործողությունների պլան, որը ցույց կտա, որ այո բացասական է, սակայն ընկերությունը կարող է դուրս գալ իրավիճակից և դրա հիման որոշում կայացվի:

Այս տարբերակը քննարկվել է Խորհրդի անդամների հետ, վերջիններիցս շատերը գտնում են, որ այս տարբերակը չափազանց ծանր և մեծ վարչարարություն պահանջող մոտեցում է ՍՊԸ-ի տեսանկյունից: Հաշվի առնելով նշվածը, առաջարկվում է ավելի պարզեցված միջանկյալ մեխանիզմ; Դիտարկվող իրավիճակի դեպքում, http://www.azdarar.am-ում կամ ցանկացած այլ հարթակում, եթե այդպիսին կորոշվի, հրապարակում այդ մասին ու պարտադիր չէ ՍՊԸ-ի լուծարումը:

Ժամանակին, երբ գրվել է ժամանակին, տրամաբանությունը եղել է, որ զուտ ակտիվների բացասական արժեքը նշանակում է, որ պարտատերերի իրավունքները պաշտպանված չեն կանոնադրական կապիտալի, սակայն վերջին 25 տարվա ընթացքում այդ մոդելից հեռացել ենք և կանոնադրական կապիտալը այլևս ապահովող միջոց չի, այն նոմինալ արժեքա՝ 5 հզր, 10 հզր կամ 50 հզր դրամի ծավալով:

Նիստի մասնակիցները ներկայացրեցին հետևյալ դիտարկումները՝

1. **Դավիթ Ղարիբյանը՝** բացի ՍՊԸ-ի շահերից պետք է բավարար երաշխավորված լինեն պարտատերերի շահերը, այդ թվում նաև ժողով գումարելու և ընկերության մեջ թեթև ներքին վարչարարություն իրականացնելու միջոցով լրացուցիչ երաշխիքներ նախատեսելով: Արդարադատության նախարարությունը գտնում է, որ ճիշտ է գնալ այդ միջանկյալ տարբերակով՝ Ընկերությունների մասին նոր օրենքի մշակման հանգամանքներում: Օրենքը ունենալու է ընդհանուր դրույթներ ու սահմանված առանձնահատկությունները՝ տարանջատված կազմակերպահրավական ձևերով: Ընդհանուր դրույթների տրամաբանությունը լինելու է միասնական մոտեցման կիրառումը և լուծարման հարցը հաստատապես ընկնելու է ընդհանուր դրույթների տակ: Եվ այս առումով, երևի թե, ավելի ճիշտ է միանման մոտեցում կիրառել և ՍՊԸ-երի և ԲԲԸ-երի համար, որովհետև հետագայում օրենքների միասնականացման ժամանակ, կարգավորումների ամրագրման մասով անելիքները առավել դյուրին կդառնան:
2. **Հովսեփ Պատվականյանը՝** փորձագիտական մակարդակում մոտեցումն ընդունելի է, սակայն Խորհրդի անդամները համամիտ չեն և գտնում են, որ ՍՊԸ-ի և ԲԲԸ-երի համար դիտարկվող՝ նույնական մոդելի կիրառումը ընդունելի չէ և դրանով ճիշտ չէ առաջնորդվել:

Ղարիբյանը Խորհրդի տեսակետը բխում է ավելի շատ մասնավոր հատվածի շահերի պաշտպանության ապահովման անհրաժեշտությունից, իսկ Արդարադատության նախարարությունը հարցը դիտարկում է, որպես առավել լայն շերտերի շահերի և իրավունքների պաշտպանության կարևորության տեսանկյունից, ինչ մասին կբարձաձայնվի նաև Արդարադատության նախարարության փորձագիտական եզրակացության տրամադրման փուլում:

3. Հայկ Մալխասյանը՝ իրավաբանական համայնքի հետ հանդիպումներում ևս հարցը բարձրացվել է, սակայն ԱԺ կողմից վերջերս ընդունվել է «Գնահատման գործունեության մասին» օրենք, որտեղ ամրագրվել է հակառակ տրամաբանությունը: Մասնավորապես ամրագրվել է, որ կանոնադրական կապիտալում ներդրվող ցանկացած գույքի դրամական գնահատումը պետք է կատարվի անկախ գնահատողի կողմից: Քանի որ նշվածը նախագծային առաջարկների ձևավորման փուլում է տեղի ունեցել, հարցը չի ներառվել այս նախագծում:

4. Կարեն Զաքարյանը՝ համամիտ լինելով Արդարադատության նախարարության տեսակետի հետ, պետք է հասկանալ ՍՊԸ-երի համար, որն է հեշտ: Մեծամասամբ ՍՊԸ-ը մեկ մասնակից են ունենում և տեխնիկական տեսանկյունից բաժնետերերի ժողով գումարելն առավել հեշտ է, քան որևէ հարթակում ծանուցում տալը, բացի այդ պետք է վճարում կատարվի և այլն: Բացի այդ եթե այս փուլում ինչ-որ փոփոխություն է արվելու, որը հետո նորից փոփոխվի, գուցե իմաստ չունի արհեստական տարբերակում դնելը:

2.8. Օրենքով հստակ սահմանել ընկերության կանոնադրությամբ ընկերության այլ մարմինների ստեղծման հնարավորությունը:

Հարցը վերաբերվում է ՍՊԸ այլ մարմինների ստեղծմանը: Գործող օրենքով սահմանված է, որ ՍՊԸ-ն ունի գործադիր մարմին և ընդհանուր ժողով, կարող է ունենալ նաև խորհուրդ: Օրենքով հստակ սահմանված չէ Ընկերության կանոնադրությամբ ընկերության այլ մարմինների ստեղծման հնարավորություն սահմանելու իրավունքը, մինչդեռ որոշ ընկերություններ տարբեր ֆունկցիաներ իրականացնելու նպատակով ցանկանում են ստեղծել օրենքով չսահմանված մարմիններ:

2.9. Օրենքով նախատեսել խորհրդին ընդհանուր ժողովի որոշ լիազորությունների վերապահման հնարավորություն:

Օրենքը սահմանում է ցանկ լիազորությունների, որոնք բացառիկ կարող են իրականացվել միայն ընդհանուր ժողովի կողմից և չի նախատեսում խորհրդին ընդհանուր ժողովի լիազորությունների վերապահման հնարավորություն, ինչը խոչընդոտ է հանդիսանում խորհուրդների դերի բարձրացման և կորպորատիվ կառավարման սկզբունքներին կիրառության տարածման համար: Առաջարկը կայանում է նրանում, որ այն դեպքում, եթե ստեղծվում է խորհուրդ, կանոնադրությամբ հնարավորություն տրվի 3 իրավասություն, այդ թվում տնօրենի նշանակման, վերապահել խորհրդին:

Հարցի վերաբերյալ ներկայացվեցին հետևյալ հարցադրումները՝

1. Արտակ Մանուկյանը՝ ֆինանսական կազմակերպությունների վրա նպատակահարմար չէ տարածել նշված դրույթը: Որովհետև այս դեպքում խորհրդին ընդհանուր ժողովի որոշ լիազորությունների վերապահումը կարող է խնդիրներ առաջացնել: Խորհուրդը պայմանականորեն լրիվ այլ անկախ մարմիններից է բաղկացած, իսկ ժողովը ավելի սեփականատերերից:

2.10. Սահմանել, որ Ընկերության կանոնադրությամբ սահմանված դեպքերում ընդհանուր ժողովի իրավասությանը վերապահված հարցերի վերաբերյալ որոշումները կարող են ընդունվել Ընկերության բոլոր մասնակիցների գրավոր որոշմամբ՝ առանց ընդհանուր ժողովի գումարման:

Օրենքը չի նախատեսում հնարավորություն ընկերության մասնակիցների համար կայացնել ժողովի իրավասությանը վերապահված հարցերով որոշումներ՝ առանց ժողով գումարելու, նույնիսկ այն դեպքում, երբ բոլոր մասնակիցները համաձայն են որոշման ընդունմանը, ինչն առաջացնում է ժողովի գումարման համար լրացուցիչ գործողությունների կատարման անհրաժեշտություն և որոշման կայացման անհարկի ձգձգումներ:

2.11. Հստակ սահմանել գործադիր մարմնի լիազորությունների դադարեցման իրավասությունը և երաշխիքները, ամրագրելով, որ Ընդհանուր ժողովն իրավունք ունի ցանկացած ժամանակ դադարեցնել ընկերության գործադիր մարմնի լիազորությունները՝ լուծելով գործադիր մարմնի, կոլեգիալ գործադիր մարմնի անդամների հետ կնքված աշխատանքային պայմանագիրը առանց դրա համար հիմք հանդիսացող հանգամանքների մատնանշման: Գործադիր մարմնի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը չի կարող լուծվել այնպիսի հիմքով, որը խախտում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3.1-ին հոդվածով սահմանված խտրականության արգելքը:

1) Վերաբերում է տնօրենի կողմից սեփական լիազորությունները դադարեցնելու հարցին, երբ տնօրենը այլևս ցանկություն չունի որպես տնօրեն հանդես գալ: Քանի որ տնօրենը պետռեգիստրում գրանցված է որպես տնօրեն և դատական պրակտիկան էլ փաստում է, որ ցանկացած փորձ, առանց մասնակիցների համաձայնության կամ վերջիններիս հետ անհամաձայնության հանգամանքում, դատապարտված է ձախողման: Նշվածի արդյունքում ստեղծվում է իրավիճակ, երբ անձը, որը չի ցանկանում շարունակել իր գործունեությունը, որպես իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար զրկված է իր այդ կարգավիճակը իր կամաարտահայտությամբ դադարեցնելու գործուն հնարավորություններից:Քանի որ տնօրենը, որպես ֆիզիկական անձ, ունի սահմանադրական իրավունքների երաշխիքներ, այդ թվում աշխատանք ընտրելու, առաջարկում ենք տնօրենի կողմից՝ լիազորությունների դադարեցման մտադրության դեպքում, տնօրենը պետք է բոլոր մասնակիցների դրա մասին ծանուցում ուղարկի և 30-օրյա ժամկետում ժողով գումարվի և որոշում կայացվի տնօրենին ազատելու և ուրիշին նշանակելու համար: Եթե այդ ժամկետում ժողովը չի գումարվում, ծանուցումների հիման վրա պետռեգիստրում կկատարվի համապատասխան փոփոխություն տնօրենի ազատման վերաբերյալ:

2) Վերաբերում է այն դեպքերին, երբ տնօրենին ազատել են, սակայն կան անհետաձգելի գործողություններ մինչև որ տնօրենին ռեգիստրից կհանեն: Պետռեգիստրը այս մասով ունի որոշ կարգավորումներ, առաջարկվում է տնօրեն նշանակելու մեխանիզմի կիրառմամբ նշանակել ժամանակավոր պաշտոնակատար, ով տնօրենի բացակայության ժամանակ կկատարի տնօրենի գործառույթները:

3) առաջարկվում է ստեղծել հնարավորություն մի քանի տնօրեն ունենալու: Կարող են կիրառվել տարբեր մոտեցումներ: Օրինակ տնօրեններ՝ տարբեր լիազորությունների հստակ ամրագրմամբ կամ օրինակ ընկերությունն ունի 2 տնօրեն լիակատար լիազորություններով, բայց կանոնադրության մեջ սահմանված է, թե յուրաքանչյուրն ինչպես է դա իրականացնելու:

4) առաջարկվում է հեշտացնել տնօրենի ազատման մեխանիզմը: Մասնավորապես, ընդհանուր ժողովն իրավունք ունի ցանկացած ժամանակ դադարեցնել ընկերության գործադիր մարմնի լիազորությունները՝ լուծելով գործադիր մարմնի, կոլեգիալ գործադիր մարմնի անդամների հետ կնքված աշխատանքային պայմանագիրը առանց դրա համար հիմք հանդիսացող հանգամանքների մատնանշման: Գործադիր մարմնի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը չի կարող լուծվել այնպիսի հիմքով, որը խախտում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3.1-ին հոդվածով սահմանված խտրականության արգելքը: Առաջարկվում է նաև սահմանել, որ նման հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում գործատուն աշխատողին վճարում է արձակման նպաստ՝ աշխատանքային պայմանագրով սահմանված չափով, բայց ոչ պակաս, քան նրա մեկ ամսվա միջին աշխատավարձի չափով:

Հարցի վերաբերյալ խորհրդի անդամների կողմից ներկայացվեցին հարցադրումներ՝ 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով առաջարկվող կարգավորումները գործնական կիրառման դեպքում կարող են հանգեցնել մի շարք խնդիրների և, ըստ էության, դրանք կարիք ունեն որոշակի լրամշակման՝ փաստացի կիրառման դեպքում հնարավոր խնդիրները բացառելու նպատակով: Նույնը վերաբերում է 4-րդ ենթակետով առաջարկվող կարգավորմանը: Ընդ որում՝ այս դեպքում պետք է կարգավորումը դիտարկել բիզնեսի բնականոն գործունեության շարունակականության ապահովման և բիզնես շահի պաշտպանության տեսանկյունից, հատկապես այն դեպքերում, երբ տնօրինի ազատումը համարյա կեսական նշանակություն ունի բիզնես գործընթացների հետագա ընթացքի վրա:

Նիստը նախագահող Գևորգ Պապոյանի կողմից արձանագրվեց/հանձնարարվեց

ա. Արձանագրվեց, որ 2.1, 2.2, 2.3, 2.4, 2.5, 2.8, 2.10 կետերի քննարկման արդյունքներով սկզբունքային առաջարկություններ և առարկություններ առկա չեն:

բ. 2.6 Արձանագրվեց՝ ՍՊԸ-երի հետ կապված դիտարկվող իրավական բացը առկա է նաև ԲԲԸ-ի մասին օրենքում:

Հանձնարարվեց փորձագիտական թիմին՝ ուսումնասիրել արձանագրած խնդրի մասով ԲԲԸ-ի մասին օրենքի համանման դրույթի լավարկման հնարավորությունը:

գ. 2.7 Արձանագրվեց՝ նպատակահարմար է հարցը դարձնել առանձին քննարկման առարկա: Քանի որ հարցը այն չէ, որ ՍՊԸ-երի և ԲԲԸ-երի մասին օրենքների բոլոր դրույթները համադրել, պետք է հասկանալ, թե որն է դիտարկել 2 օրենքների համար ընդհանուր դրույթների տեսանկյունից թե այս մասով ավելի ճիշտ է տարանջատում անել:
Հանձնարարվեց՝ փորձագիտական թիմին իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություն՝ ՍՊԸ-երի և ԲԲԸ-երի մասին օրենքների բոլոր դրույթները համադրումը ընդհանուր դրույթների տեսանկյունից հասկանալու համար:

դ. 2.9 Արձանագրվեց, որ ֆինանսական կազմակերպությունների վրա դրույթի կիրառման դեպքում կարող է խնդիրներ առաջանալ: Խորհուրդը պայմանականորեն լրիվ այլ անկախ մարմիններից է բաղկացած, իսկ ժողովը ավելի սեփականատերերից:
Հանձնարարվեց փորձագիտական թիմին՝ ուսումնասիրել հարցը՝ ոլորտային առանձնահատկությունների ու այդ մասով կարգավորումների տեսանկյունից հնարավոր խնդիրները քարտեզագրելու համար:

ե.2.11 Արձանագրվեց, որ Խորհրդի անդամների մոտ առկա են շարք դիտարկումներ 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով ներկայացվածի մասով, քանի որ առաջարկվող կարգավորումները գործնական կիրառման դեպքում կարող են հանգեցնել մի շարք խնդիրների: Նույնը վերաբերում է 4-րդ ենթակետով առաջարկվող կարգավորմանը: Ընդ որում՝ Խորհրդի անդամների կողմից միաձայն արձանագրվեց նշյալ կետով սահմանված դեպքերում տնօրենի ազատման հարցում բիզնեսի համար գործընթացների պարզեցման կարևորությունը, քանի որ կարգավորումը դիտարկել հիմնականում բիզնեսի բնականոն գործունեության շարունակականության ապահովման և բիզնես շահի պաշտպանության տեսանկյունից:
Հանձնարարվեց փորձագիտական թիմին՝ ներկայացված կարգավորումները առանձին կտորով կրկին քննարկել խորհրդի մասնավոր հատվածի հետ՝ գործնական կիրառման դեպքում հնարավոր բացերը գտնելու և հնարավոր լուծումներ տալու համար և դրանց արդյունքներով լրամշակել համապատասխան դրույթը:

Նիստը նախագահող
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

_____
(ստորագրություն)

Արձանագրությունը կազմեց՝
ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊՄԵ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ՀՌԻՓՍԻՄԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ